

Արձանագրություն թիվ 9

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

16 մարտի 2015թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ա.Ռ.Մելքունյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 15 անդամները: Հրավիրվել էին նաև ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը և ամբիոնների դասախոսներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի նյութատեխնիկական բազայի արդյունավետ օգտագործման ուղիների քննարկում:
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
2. 2013-14 ուստարվա երկրորդ կիսամյակի ԵՊՀ ռեկտորատի կողմից ուսանողների շրջանում անցկացված դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման վերաբերյալ հարցման արդյունքների քննարկում:
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
3. Ընթացիկ հարցեր:
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/

ԼՄԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, գիտական խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ ըստ հաստատված աշխատանքային պլանի հերթական նիստին նախատեսված էր նաև դեկանի հաշվետվությունը, որը սակայն տեղափոխվել էր նախորդ նիստ, ուստի կքննարկվի երկու հարց և ընթացիկ հարցեր:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան նշված հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի կառուցվածքում գործող լսարանների /թվով 2/, գծանկարի և գունանկարի /թվով 4/, տեքստիլ/թվով 3/, քանդակի, խեցեգործության, փայտի գեղարվեստական մշակման արվեստանոցների արդյունավետ օգտագործման ուղիներն և նպատակային շահագործման անհրաժեշտությունը: Մասնավորապես նշվեց, որ կապված ուսանողների թվաքանակի կրճատման հետ գործվածքագիտության երեք արվեստանոցների փոխարեն այսուհետ նպատակահարմար է շահագործել երկուսը, իսկ մյուսը կձառայի „Դիզայն” մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված „Հագուստի մոդելավորում” առարկայի գործնական աշխատանքներն իրականացնելու համար: Ինչ վերաբերվում է տեսական դասընթացներին / դասախոսություն, սեմինար և այլն/ կազմակերպմանը Ա.Մարգարյանը նշեց ,որ անհրաժեշտություն է առաջացել /բացի նրանից , որ օգտվում են բնագիտական ֆակուլտետի համակարգչային երկու սրահներից և online լսարանից/ ունենալ ժամանակակից էլեկտրոնային միջոցներով կահավորված, ինտերնետային կապով ապահովված մեկ լսարան, քանզի, կրթության որակի ապահովման պահանջներից ելնելով մի խումբ դասավանդողներ իրենց պորտֆոլիոներն ու առարկայական ծրագրերը, ինչպես նաև դասախոսությունները կազմելիս ընդգրկել են էլեկտրոնային ցուցադրություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Հ.Միրզոյանը, Մ.Մելքումյանը և Ա.Ուլիխանյանը: Նրանք համակարծիք էին զեկուցողի հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ— Զեկուցագրով դիմել ԵՊՀ ԻՄ տնօրենությանը՝ վերոհիշյալ խնդիրները լուծելու համար:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը և ներկայացրեց 2013-2014թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի ուսանողների շրջանում դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման վերաբերյալ անցկացված հարցումների արդյունքները: Ծավալվեց բուռն քննարկում և վեր հանվեցին այնպիսի մտահոգություններ և հարցադրումներ, ինչպիսին են .

ա. Ուսանողների կարծիքները ավելի շատ սուբյեկտիվ են, քան օբյեկտիվ

բ. Այն դասախոսները, որոնք քննական պրոցեսում գնահատելու ժամանակ խիստ են եղել , նրանք ստացել են ավելի ցածր , իսկ նրանք ովքեր ուռճացրել են գնահատականները, ուսանողների կողմից գնահատվել են բավականին բարձր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գրեթե բոլոր դասավանդողները և նշեցին , որ հարցը քննարկվել է ամբիոնների համատեղ նիստում, բոլոր գնահատականները բարձրաձայնվել և կատարվել են համապատասխան հետևություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել ամբրոնների վարիչներին ուսանողների կողմից մատնանշված թերությունները վերանայելու ուղղությամբ տանել հետևողական աշխատանքներ և հնարավորության սահմաններում վերանայել նրանք:

Ընթացիկ հարցերի վերաբերյալ հանդես եկավ Ա.Շ.Մարգարյանը և նշեց , որ կարգապահական հարցերը եղել և մնում են կարևորագույն պահանջ ինչպես ուսանողների , այնպես էլ աշխատակիցների համար: Նա ևս մեկ անգամ հիշեցրեց այն մասին, որ համաձայն ԵՊՀ ԻՄ կարգապահական կանոնակարգի ուսանողներին 30 ժամ անհարգելի բացակայության դեպքում գրավոր նկատողություն է հայտարարվում դեկանի կողմից , իսկ 60-ի դեպքում տնօրենի և 90-ի դեպքում հեռացվում է համալսարանից: Ձեկուցողը մտահոգություն հայտնեց „Կիրառական արվեստ,, մասնագիտության երրորդ կուրսի վերաբերյալ , որտեղ կան ուսանողներ /Ա.Ասիլյան, Ա.Ամիրյան /, որոնք արդեն նկատողություն են ստացել տնօրենի կողմից: Աշխատակիցների վերաբերյալ նշվեց, որ որոշ դասախոսներ հաճախակի խախտում են աշխատանքային կարգապահությունը և ստանում բանավոր զգուշացումներ և նկատողություններ: Նման կերպ շարունակելու դեպքում նրանք կստանան գրավոր նկատողություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ուսումնական խորհրդատու Դ.Չիբուխյանը, մասնագիտության պատասխանատու Ա. Չիբուխյանը և նշեցին , որ վերոհիշյալ ուսանողների հետ ունեցել են անհատական գրույցներ, բացատրվել և զգուշացվել են հետագա գործողությունների մասին,իսկ վերջին մեկ շաբաթվա ընթացքում անհարգելի բացակայություններ չեն ունեցել:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հետևողական լինել հաճախակի բացակայություններ ունեցող ուսանողների վարքագծին և նրանց հետ շարունակել բացատրական աշխատանքները:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա.Ռ.Մելքումյան